

ԱՆԱՀԻՏ ԱՆՏՈՆՅԱՆ

Ո՞Վ Է ՍՈՒՐԲ ՈՍԿՅԱՆՅ ԵՒ ՍՈՒՐԲ ՍՈՒՔԻԱՍՅԱՆՅ
ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴԻՇՎԱԾ ԴԱՅՈՑ ԱՐՏԱՇԵՍ ԹԱՎԱՎՈՐԸ,
ԵՒ ՈՎՔԵՐ՝ ՆՐԱ ՈՐՊԻՆԵՐԸ

Սկիզբը՝ 2021 թ. Թ., Ժ. եւ ԺԱ. համարներում

Մովսես Խորենացու եւ Դիոն Կասսիոսի տեղեկությունների մեկ այլ ընդհանրությունն անդրադարձել է Լ. Շահինյանը¹: Համաձայն Մովսես Խորենացու՝ Արտաշեսի որդի Մաժանը դիմել է Տրայանոսին՝ Հայաստանից հեռացնելու համար իր ավագ եղբայր Արտավազդին եւ մյուս եղբորը՝ Տիրանին, որին անգավակ Արտավազդը ճանաչել էր իրեն հաջորդ: Տրայանոսն անտեսել է Մաժանին, իսկ եղբայրները սպանել են նրան՝ իմանալով Տրայանոսի մոտ նրա շարախոսության մասին²: Նույն կայսեր արշավանքի ժամանակ Հայաստանում եղբայրների հակառակության մասին է պատմում նաեւ Դիոն Կասսիոսը: Նրա հաղորդմամբ՝ Տրայանոսի արշավանքի սկզբում, երբ կայսրը դեռ Աթենք էր հասել, պարթևական թագավոր Խոսրովը (վերելում հիշված Խոսրով Ա.-ն, որը հայ մատենագրությանը, նաեւ Սուքիասյանց վկայաբանությանը հայտնի է Արտաշես անունով) դիմել է հաշտության համար եւ առաջարկել հայոց գահին Աշխադարի փոխարեն, որին ինքը հեռացրել է, ճանաչել Պարթամասիրին, որը նույնպես Բակուրի որդին է: Աշխադարն ու Պարթամասիրը, այսպիսով, եղբայրներ են: Շարունակության մեջ Պարթամասիրն անվանված է Խոսրով Ա.-ի եղբորորդի, որով Աշխադարի եւ Պարթամասիրի հայր Բակուրը Խոսրով Ա.-ին եղբայր է մատնանշված: Ինքը՝ Պարթամասիրը, նախապես երկու նամակ գրած լինելով Տրայանոսին, վերջինիս Հայաստան մտնելուց հետո էլեգեայում հանդիպել է կայսրին եւ ակնկալել, որ պիտի թագադրվի նրանից, ինչպես ժամանակին Տրդատը՝ Ներոնից: Տրայանո-

¹ Տե՛ս Լ. ՇԱՀԻՆՅԱՆ, Հայաստանը եւ առաջին Արշակունիները, Երեւան, 1993, էջ 321–335:

² Տե՛ս ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմություն Հայոց, գք. Բ, գլ. ԾԵ., Տփղիս, 1913, էջ 185–186, աշխ.՝ Երեւան, 1990, էջ 120–121:

սը, սակայն, նրան ձեռնունայն է թողել՝ հայտարարելով, որ Հայաստանը՝ որպես նահանգ, պիտի միավորի կայսրությանը³:

Այն, որ երկու պատմիչները ներկայացրել են հայոց թագի հավակնորդների (մեկի ներկայացմամբ՝ Մաթան, մյուսի՝ Պարթամասիր), որոնք փորձ են արել Տրայանոսի միջոցով իշխանությունից հեռացնել իրենց եղբայրներին (մեկի ներկայացմամբ՝ Արտավազդ, մյուսի՝ Աշխադար), և, Շահինյանը դիտարկել է որպես միմյանց զուգահեռ հաղորդումներ: Հետեւելով հայր Ն. Անդրիկյանին⁴՝ նա ցույց է տվել, որ ժողովրդական զրույցներում հիշատակված Արտաշեսի ավագ որդի Արտավազդ Չարը կամ Շիրգարը Դիոն Կասսիոսից հիշված Աշխադարն է, իսկ Մաթանը՝ պարթև Մաթան—Մաժիր—Մասիր անցումով՝ Պարթամասիրը: Նա ներկայացրել է, որ ինչպես Արտաշեսի ավագ որդի Արտավազդը, հորը հակառակվելով, իրեն դրսևորել է որպես երկրի փաստացի տիրակալ, այնպես եւ դիրքի ու իշխանության են ձգտել նրա եղբայրները, իսկ Տրայանոսի արշավանքից փորձել է օգտվել Պարթամասիր Մաթանը:

Լիովին համաձայն լինելով այս տեղեկությունների համադրելիության հարցում՝ որոշ ուղղում կառաջարկենք: Նախ՝ Մովսես Խորենացու նկարագրությամբ՝ իշխանության ձգտող Արտավազդը (Աշխադարը) Հայաստանում ստեղծել է այնպիսի լարված իրավիճակ, որից խուսափելու, ավագ որդու հետ չառճակատվելու համար հայրը՝ Արտաշեսը (Վաղարշ Ա.), ինչպես ասացինք, առանձնացել է երկրի մի մասում: Նրա իշխանությունը Հայաստանի այդ մի մասի վրա է ճանաչել Տրայանոսը: Երկրորդ՝ Արտավազդի փաստական իշխանության պատճառով է, որ Դիոն Կասսիոսի աշխատության մեջ խոսվում է հայոց նոր՝ Աշխադար թագավորի մասին, որը գահ է բարձրացել առանց Հռոմի գիտության, թեպետ, ինչպես պատմիչն իսկ հաստատում է, Տրայանոսը տողորված էր խիստ փառամոլությամբ⁵, ինչը նրա արեւելյան արշավանքի իրական պատճառն էր: Այսպիսով՝ Տրայանոսի արշավանքից առաջ Հայաստանում նոր իշխող է մատնանշված ինչպես Մովսես Խորենացու, այնպես եւ Դիոն Կասսիոսի պատմական երկերում՝ Արտավազդ Աշխադարը, որի փաստա-

³ *Скн Дион Кассий, Римская история (книги LXIV—LXXX), LXVIII, 19, 1—5, 20, 1—4, СПб, 2011, էջ 108—110. հմմտ. «Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին», հտ. 9, Դիոն Կասսիոս, Երեւան, 1976, էջ 207—209:*

⁴ *Скн У. Անդրիկյան, Քննություն մը Շիրգարու վրայ, «Բազմավէպ», 1906, Բ., էջ 56—59:*

⁵ *Скн Дион Кассий, Римская история, LXVIII, 17, 1, էջ 107. հմմտ. «Օտար աղբյուրները...», հտ. 9, էջ 206—207:*

կան իշխանությունը Հայաստանում (հոր գահակալության օրոք) Տրայանոս կայսրն արշավանքի պատրվակ է դարձրել՝ իրականում ունենալով նվաճողական նպատակներ։ Այդ պատրվակը վերացնելու նպատակով է Տրայանոսին նրա արշավանքի սկզբում դիմել պարթևական թագավոր խոսրով Ա.-ն՝ խաղաղություն խնդրելով եւ հայտնելով, որ ինքը հեռացրել է Աշխադարին։ Սա չի նշանակում, թե Աշխադարին (Արտավազդին) Հայաստանում նա է կարգել թագավոր, այլ պատերազմից խուսափելու անհանգստությունից անգիշտող, քաջ եւ հպարտ Արտավազդի (Աշխադարի) փոխարեն, ինչպիսին նրան նկարագրում է Մովսես Խորենացին, հայոց գահի համար պաշտպանել է նրա եղբայր Պարթամասիրի թեկնածությունը՝ օգնելով նրան եւ խնդրելով Տրայանոս կայսրին, որ նրան հանձնի Հայաստանը։ Եւ երրորդ՝ մեր կարծիքով՝ Պարթամասիրը Մաժանը չէ, ինչպես կարծել է Լ. Շահինյանը։

Մովսես Խորենացու հաղորդմամբ՝ Արտաշեսի որդիներից Մաժանը, որ երկրի քրմապետն էր, Տրայանոսին առաջարկել է Արտավազդի (Աշխադարի) եւ նրան հաջորդ կարգված Տիրանի փոխարեն հայոց գահին ճանաչել ոչ թե իրեն, այլ իրենց մյուս եղբայր Զարեհին։ Զարեհը, մեր կարծիքով, Արտաշեսի եւ Սաթենիկի նույն որդին է, որը Սուրբ Ոսկյանց եւ Սուրբ Սուքիասյանց վկայաբանություններում հիշված է Վրդոյն (կամ Վրոյն) անունով, որի ամբողջական ձեւը Վարդանն է։ Սուքիասյանց վկայաբանության ու Մովսես Խորենացու տեղեկություններում համընկնում են Արտաշեսի եւ Սաթենիկի որդիներից Արտավազդի, Տիրանի, Վնոյնի անունները։ Վերջինիս Մովսես Խորենացին հիշատակում է ամբողջական՝ Վրույր⁶ ձեւով, իսկ վկայաբանության հիշած Վրդոյն, այն է՝ Վարդան անվան փոխարեն պատմիչը նշում է այդ անվան իմաստային համարժեքը հանդիսացող Զարեհ անունը։

⁶ Հր. Աճառյանը վկայաբանություններում հիշված Արտաշեսի կրտսեր որդիների անունները՝ Վրդոյն (կամ Վրոյն), Զրոն, Վնոյն, նույն անվան տարբերակներ է համարում՝ վերագրելով դրանք մեկ որդու («Հայոց անձնանունների բառարան», հտ. Ե., Երեւան, 1962, էջ 134)։ Դ. վրդ. Ալիշանը մատնանշված է համարում 2 որդու եւ Վրոյն անունն է համապատասխանեցնում Մովսես Խորենացու հիշատակած Վրույր անվանը։ Վրոյնը, սակայն, հիշված է որպես Վրդոյնի տարբերակ («Լիակատար վարք եւ վկայաբանություն սրբոց», հտ. Բ., էջ 126)։ Որպեսզի Վրոյնը Վրոյր (Վրույր) դառնա, վերջին «ն»-ն փոխվելու է «ր»ի։ Նույն սկզբունքով, այսինքն՝ ն-ր անցումով, բայց 2 տեղ, Վնոյնն է դառնում Վրոյր (Վրույր)։ Լեզուներում ն-ր (ը, դ) անցումն օրինաչափ է (հայ.՝ մանչուկ, ռուս.՝ мальчик, հուն.՝ μωρό, հայ.՝ տուրք, ռուս.՝ дань, հայ.՝ Ծունդա, վրաց.՝ Սուլդա, հայերենի խոնարհման մեջ՝ անել-արեց, վերցնել-վերցրեց....)։

«Ջառ(ր)» բառը, որը հիմքն է Ջարեհ անվան, հայոց լեզվում եւ իրանական լեզուներում նշանակում է ոսկե լար, ոսկի: Ոսկին «զառ(ր)» է կոչվում պայծառ գույնի պատճառով, ինչպես արեւագույն պայծառություն ունենալու համար «զառ(ր)իկ» է անվանվել մկնդեղը⁷: «Վառ(ր)» բառը հայոց լեզվում եւ այլ լեզուներում ունի փայլուն, վառված, լուսավառ եւ հարակից իմաստներ, իսկ սանսկրիտում varnu նշանակում է արեւ, varni՝ ոսկի⁸: Արեւի հետ առնչվող իմաստ ունի Վարդան անունը: Համաձայն Հր. Աճառյանի՝ Վարդ անունը ծագել է փառքը ավելացած (զենդ.՝ varədat-xvarənah), աճեցնող իմաստ ցույց տվող իրանական բառերից (հպս.՝ Arta vardiya — սուրբ կրոնն աճեցնող)⁹, որտեղ var արմատով են արտահայտված եւ աճեցնող, ավելացած իմաստները, եւ «փառք» բառը (xvarənah)՝ մատնանշելով արեւից բխող հատկանիշներ: Ավեստայում hvareno (хварно) բառը նշանակում է փայլ, ճաճանշ՝ իբրեւ նշան Աստծու փառքի, լույսի, որի կողքը ձեռք է բերում հոգեւոր ու մարմնավոր զորություններ, դառնում փառավոր, բարձր բոլորից¹⁰: Արեւից (որը եւ զրադաշտականության աստվածն էր) բխող փառավոր, աճած, լուսավոր, պայծառ, վառ իմաստներ է արտահայտում Վարդան անունը, ինչպես եւ՝ վարդ ծաղկի անունը: Այն ծագում է հնդեւրոպական նախալեզվի «աճեցնել», «բարձրացնել» բառից՝ ueredh¹¹, որը զենդում դրսեւորված է varəd, սանսկրիտում՝ vardhate ձեւով՝ արտահայտելով բառի հիմքը՝ varnu (զենդ.՝ hvare)՝ «արեւ», որը եւ աճեցնում է, պայծառացնում:

Հայոց լեզվում «վառ(ր)» բառը նույնպես արտահայտում է ոչ միայն պայծառ գույն, այլեւ փարթամ=աճած=հարուստ իմաստներ (վառ կամ հարուստ ներաշխարհ, կերպար, վառ կամ փարթամ, շքեղ նկարագրություն, դիմագծեր, վառ կամ փառավոր անհատ), իսկ պայծառություն, փայլ արտահայտող «զառ-վառ» բառում «զառ(ր)»-ը եւ «վառ(ր)»-ը միմյանց հոմանիշ են: «Ջառ(ր)» եւ «վառ(ր)» բառերի նույնիմաստութունն ակնհայտ դրսեւորված է Վարդգես անվան մեջ, որը Հր. Աճառյանը բացատրում է վարդագույն մազեր ունեցող, ոսկեհեր¹², այսինքն՝ վարդա-

⁷ Տէս Հր. ԱՃԱՌԵԱՆ, Հայերէն արմատական բառարան, հտ. Բ., Երեւան, 1973, էջ 81:

⁸ Տէս անդ, հտ. Դ., Երեւան, 1979, էջ 307308:

⁹ Տէս անդ, հտ. Ե., Երեւան, 1962, էջ 69:

¹⁰ Տէս «Авеста», «Закон против дэвов», СПб, 2008, էջ 271. “The sacred books of the East”, Harvard, 1880, էջ LXII—LXIII, ծնթ. 1. Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆ, Ջամեադ եաշթ, Երեւան, 2007, էջ 14:

¹¹ Տէս Հր. ԱՃԱՌԵԱՆ, Հայերէն արմատական բառարան, հտ. Դ., էջ 317:

¹² Տէս Հր. ԱՃԱՌԵԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ե., էջ 109:

գույնն ու ոսկեգույնը հոմանիշ են, որովհետեւ պայծառ, արեւագույն են: Այդ նշանակութեամբ Տիրոջ Պայծառակերպության տոնի հետ կապվել է «Վարդավառ» անվանումը, նաեւ ջուր ցողելու ժողովրդական սովորությունը՝ իբրեւ հիշատակ Նոյի ժամանակ ջրով աշխարհի մաքրման (Աստղիկը Նոյի աղջիկն է եղել նախքան մարդկանց կողմից աստվածացվելը¹³) ու իբրեւ խորհուրդ՝ շնորհի ժամանակում (Քրիստոսի գալուստով) Քրիստոսով սրբվելու եւ պայծառակերպվելու՝ հավիտենական կյանքի համար: Վարդան անվան վառ, փառատես, ոսկեգույն (արեւագույն) իմաստը, կարծում ենք, արտահայտված է նաեւ այն իրողությունն, որ Մեծ Վարդանի դուստրը՝ ծնողներից Վարդենի անվանված, կոչվել է նաեւ Շուշանիկ¹⁴, որը, ըստ էության, նրա Վարդենի անվան թարգմանությունն է՝ պայծառ, լուսավոր իմաստով, որն արտահայտում են վարդ ու շուշան ծաղիկները:

Ղեւոնդ Ալիշանը Վարդան անունը նույնացնում է Պարթամասիր անվան հետ (Վարդանասար)¹⁵: Հանձին բյուզանդական հայազգի զորավարներ Բարդաս Սկլերոսի եւ Բարդաս Փոկասի՝ պատմությունը մատուցում է Վարդան անվան Բարդ-աս ձեւը¹⁶, որը բ—պ, դ—թ անցումով դառնում է Պարթ—Պարթան(մ): Պարթամասիր անունը նույնպես իմաստային առումով առնչվում է արեւին: Հր. Աճառյանն այն ծագեցնում է իրանական partama, պահլավերեն pahlum բառերից՝ «լավագույն» նշանակությամբ¹⁷: Ակնհայտ է, որ երկու բառն էլ «լավագույն» իմաստն են ձեռք բերել, որովհետեւ մատնացույց են անում իշխող պարթեանների ցեղանվանումը եւ բուն հայրենիք Բահլը (Բալխ, պատմական Բակտրիայում): Բահլ քաղաքը Մովսես Խորենացին անվանում է Բահլ Առավոտին (գք. Բ., գլ. Բ.), իսկ «Աշխարհացոյց»-ում՝ Բահլի բամիկ, որը Ստ. Մալխասյանը բացատրում է արեւելյան դիրք ունեցող, որտեղ արեւը շուտ է ծագում, արեւային է, լուսաճաճանչ է¹⁸: Լուսյի աստվածությունը դավանող Ավես-

¹³ Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, գք. Ա., գլ. Զ., 1913, էջ 24, աշխ.՝ 1990, էջ 18. Ղ. Վրդ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1910, էջ 304:

¹⁴ Տե՛ս «Սովիերք», հտ. Թ., «Վկայաբանութիւն Սրբոյն Շուշանկան դասեր Մեծին Վարդանայ», Վենետիկ, 1853, էջ 11:

¹⁵ Տե՛ս Ղ. Վրդ. Ալիշան, Պարթամասիր կամ Վարդանասար թագաւոր, «Բազմավէպ», 1850, թիւ 17, էջ 295–296:

¹⁶ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ե., էջ 72:

¹⁷ Տե՛ս անդ, հտ. Դ., Երեւան, 1948, էջ 231:

¹⁸ Տե՛ս Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն, Երեւան, 1990, էջ 257, ծնթ. 87:

տայում՝ Միհրին նվիրված օրհներգի մեջ, Բահլը հիշված է այն քաղաքների շարքում, որոնց վրա ծագում է արեգակի լույսը¹⁹: Աստվածային լույսը, փառքը (Ավեստայի hvareno, хварно-ն), որի մարմնացումն արեն էր, հեղված ընկալելով իրենց հայրենի քաղաքի եւ ցեղի վրա՝ պարթեւներն իրենց համարում էին լավագույն:

Այսպիսով՝ Պարթամասիր եւ Վարդան անունները նույնիմաստ են, եթե նույն անունը չեն՝ փոքր-ինչ տարբեր հնչողությամբ: Ուշագրավ է, որ Վարդան է կոչվել նաեւ Կուբան գետը²⁰ (եթե ոչ ինչ-որ մեկի անունով, ապա՝ փառատես, վառ, փարթամ, աճեցնող իմաստով), որը կենդանություն է պարգեւում Կովկասից դեպի Ազովի ծով ձգվող տարածքին, որտեղ ժամանակին սփռված էին սկյութա-սարմատական ցեղեր, որոնցից են սերում նաեւ պարթեւները: Հայ Արշակունիները նույնպես ծագումով պարթեւ էին եւ անհաղորդ չէին պարթեւական բառապաշարին ու մտածողությանը: Հր. Աճառյանի այն կարծիքը, թե պահլավերենը հայ ազնվականության լեզուն էր, բնականաբար, առավելապես վերաբերում է Հայաստանում Արշակունիների իշխանության այս առաջին դարերին:

Այս դիտարկմամբ Սուքիասյանց վկայաբանության պահպանած Վարդան անունը կապ է դառնում օտար աղբյուրներից հիշված Պարթամասիրի եւ Մովսես Խորենացուն հայտնի Զարեհի միջեւ՝ նույնացնելով նրանց, քանի որ Զարեհ անունը Պարթամասիր=Վարդան անվան իմաստային համարժեքը կամ թարգմանությունն է: Հնում ընդունված էր անունների թարգմանությունը: Տվյալ դեպքում Զարեհի՝ հայոց գահի նույն թեկնածուի մասին են խոսում Դիոն Կասսիոսը եւ Մովսես Խորենացին՝ նրանցից առաջինը հաղորդելով, որ խոսքով Ա.-ն Տրայանոս կայսերը հայոց գահի համար առաջարկել է Պարթամասիրին՝ ասելով, որ Աշխադարը (Արտավազդը) բարեկամ չէ ո՛չ Հռոմին, ո՛չ Պարթիային, եւ երկրորդը՝ պատմելով, որ Մաթանը Զարեհին իշխանության բերելու համար դիմել է Տրայանոսին՝ ասելով, որ եթե Արտավազդը (Աշխադարը) մնա գահին, կայսրը Հայաստանից հարկ չի ստանա:

Պարթամասիր=Վարդան, ըստ իմաստի՝ նույնն է Զարեհ: Արտաշես Վաղարշ Ա.-ի այս անունով որդուն է, որ Տրայանոսը հռոմեական ուղեկցող ջոկատով հեռացրել է Հայաստանից՝ ըստ Դիոն Կասսիոսի, իսկ այ-

¹⁹ Տէս «Древний Мерв в свидетельствах письменных источников», Ашгабад, 1994, էջ 7:

²⁰ Տէս ԴԱՎԻԴ ԲԱԳՐԱՏԻՈՆԻ, Իստորիա Գրուզի, §57, Թբիլիսի, 1971:

նուհետեւ սպանել տվել, ինչպես հիշատակում է Եւտրոպիոսը (Դ. դ.)²¹: Պարթամասիրին վերոնշյալ հիմնավորմամբ նույնացնելով Զարեհի հետ եւ ոչ Մաժանի՝ չենք հակասում նաեւ Մովսէս Խորենացու տեղեկութեանը, ըստ որի՝ Մաժանին սպանել են նրա եղբայրներ Արտավազդն ու Տիրանը՝ իմանալով Տրայանոսի մոտ նրա չարախոսութեան մասին:

Դիոն Կասսիոսի հիշատակած Վաղարշը, Աշխադարն ու Պարթամասիրը, այսպիսով, համադրելի են նույն ժամանակում եւ հանգամանքներում Մովսէս Խորենացու կողմից հիշված Արտաշեսի եւ նրա որդիներ Արտավազդի ու Զարեհի հետ: Տեղեկությունների այսպիսի լուսաբանությունը ընդունելու դեպքում շարունակում է հարց մնալ, թե Սանատրուկի մահից հետո, եթե նա, հաջորդելով Տրդատ Ա.-ին, իշխել է 88(75)–110 թթ., եւ նրա ժամանակ, ինչպես ընդունվում է, Հայաստանն այնքան հզոր է եղել, որ գրավել է Եգիպտոսի թագավորությունը, ուրեմն ինչ հանգամանքներում է պարթեական թագավորը Հայաստանում գահակալ կարգել պարթեւ արքայազնի եւ հետո նրան փոխարինել եղբորով:

Իրականում խոսքը վերաբերում է հայոց արքայազնին՝ Արտավազդին կամ Աշխադարին, որն Արտաշես Վաղարշ Ա.-ի օրոք արդեն իր ձեռքն էր վերցրել երկրում իշխանությունը: Արտավազդ Աշխադարին հակադրվել է Տրայանոսի արշավանքից օգտված Զարեհ Պարթամասիր եղբայրը, իսկ Խոսրով Ա. պարթեական թագավորը պաշտպանել է վերջինիս թեկնածությունը՝ հակառակ անգիշող Արտավազդ Աշխադարի, քանի որ նրա իշխանությունը Հայաստանում Տրայանոսը պատրվակ էր դարձրել արեւելյան արշավանքի համար, որի թիրախը ոչ միայն, նույնիսկ ոչ այնքան Հայաստանն էր, որքան Պարթեական թագավորությունը: Խոսրով Ա.-ն նաեւ օգնական ուժեր է տրամադրել Զարեհ Պարթամասիրին, ինչի մասին Դիոն Կասսիոսը հիշատակել է էլեգիայում հանդիպման առիթով: Իհարկե, հայոց արքայազնը կարող էր եւ ընդառաջ գնալ կայսերը երկրի ցանկացած մասից, բայց ընդհանուր պատկերին ներդաշնակ է նաեւ պատմիչի այս հաղորդումը, ըստ որի՝ կայսեր հետ հանդիպումը կայացել է Հայաստանի հյուսիսարեւմտյան հատվածում, իսկ հյուսիսային կողմնապահ Արտաշեսը կարգել էր Զարեհին, ինչպես հայտնի է հայոց եւ վրաց աղբյուրների տեղեկություններով:

²¹ S^{ku} Евтропий, Краткая история от основания Города, VIII, 3, 1 (տե՛ս «Римские историки IV века», изд. дом РОССПЭН, 1997, էջ 35):

Գոյություն ունեն 78—105 թվականներով նշված պարթևական Բակուր Բ. թագավորի դրամները, եւ Դիոն Կասսիոսի պատմածը Բակուրի որդիներ Աշխադարի ու Պարթամասիրի մասին հայագիտության ու իրանագիտության մեջ վերագրվում է այս թագավորին²²: Կարծում ենք, որ զուտ անվան նույնությունը բավարար չէ նույնացման համար, ավելի ծանրակշիռ է այն իրողությունը, որ համընկնում են Մովսես Խորենացու եւ Դիոն Կասսիոսի տեղեկությունները Տրայանոսի արշավանքի նույն ժամանակում եւ հանգամանքներում հիշված Սանատրուկի որդի Արտաշեսի կամ Վաղարշի, ինչպես եւ՝ հայոց գահի համար եղբայրների պայքարի մասին: Բերված դիտարկումները, կարծում ենք, համոզիչ են դարձնում, որ նրանք ոչ թե պարթևական տերության արքայազններ են, այլ հայոց Արշակունի թագավորի՝ Արտաշես Վաղարշ Ա.-ի որդիները:

Բացատրելի է նաեւ հարցը, թե ինչու է Արտավազդ Աշխադարի ու Զարեհ Պարթամասիրի հայրը Դիոն Կասսիոսի գործում անվանված Բակուր եւ պարթևական թագավոր Խոսրով Ա.-ի եղբայր: Այդպես նրան կոչել է Խոսրով Ա.-ն՝ Տրայանոս կայսեր մոտ ուղարկած պատվիրակների միջոցով, գուցե նաեւ՝ նամակում: Պատվիրակների մասին խոսելուց հետո Դիոն Կասսիոսն ավելացնում է, որ կայսրը նրանց պատասխան չտվեց ո՛չ բանավոր, ո՛չ գրավոր²³, ինչը հուշում է, որ պատվիրակները, իրենց թագավորի խնդրանքը բանավոր ներկայացնելուց բացի, բերել են նաեւ Խոսրով Ա.-ի նամակը:

Լինելով Արշակունի՝ Խոսրով Ա.-ն կարող էր հայոց Արշակունիների շառավիղ Արտաշես Վաղարշ Ա.-ին եղբայր կոչել, բայց տվյալ դեպքում՝ ոչ միայն այս պատճառով: Վերելում տեսանք, որ Խոսրով Ա.-ին հայ մատենագրությունն Արտաշես անունով գիտի, իսկ Սուբիասյանց վկայաբանությունը նրա մասին նշում է, որ հայոց Արտաշեսի հետ մահացել են նույն կամ մոտակա տարում: Համաձայն Մովսես Խորենացու՝ հայոց Արտաշեսն օգնել է, որ գահ բարձրանա պարթևական Արտաշես Խոսրով

²² Сѣу Н. Дибвойз, Политическая история Парфии, СПб, 2008, էջ 183—188. А. Бокщанин, Парфия и Рим, ч. II, Москва, 1966, էջ 235—236. «Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ. հտ. Ա., Երեւան, 1971, էջ 768—775. Հ. ՄԱՆԱԿՅԱՆ, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հտ. Բ., Երեւան, 1978, էջ 25—32 եւ այլն:

²³ Сѣу Дион Кассий, Римская история, LXVIII, 17, 2, էջ 107. հմմտ. «Օտար աղբյուրները...», հտ. 9, էջ 207:

Ա.-ն²⁴, որով այս թագավորը մի պատճառ եւս ուներ հայոց թագավոր Արտաշես Վաղարշ Ա.-ին եղբայր անվանելու:

Խոսքով Ա.-ն կամ նրա դեսպանները հայոց թագավորին կոչել են նաեւ Բակուր անունով, որը թագավորին տրվող տիտղոս էր՝ պատվանուն, ինչպես հուշում են հայ պատմիչները: Սեբեոսը, երբ խոսում է Մամիկոնյան տան ծագման մասին, ասում է, որ Մամիկ ու Կոնակ եղբայրները եկան Ճենաց երկրից²⁵՝ ապստամբած լինելով իրենց թագավոր Ճենբակուրի դեմ²⁶: Մովսես Խորենացին նույնպես պատմում է, որ Մամգունը Հայաստան է եկել՝ խույս տալով Ճենաց թագավոր Արբոկ անունով Ճենբակուրից եւ բացատրում, որ Ճեն-Բակուրը թագավորական տիտղոսն է²⁷: Ստ. Մալխասյանը ծանոթագրել է, որ Ճեն-Բակուր նշանակում է Ճենաց Բակուր, իսկ Բակուրը ծագում է պարսկերեն bag եւ puhɾ բառերից ու նշանակում է աստվածորդի, որը թագավորի պատվանունն է²⁸: Հայաստանում թագավորները նույնպես աստվածացվել են, կրել են նաեւ «աստված» պատվանունը²⁹:

«Հայոց պատմությունը» որպես աղբյուր հիշատակելով՝ Պրոկոպիոս Կեսարացին (Ձ. դ.) Բակուր է անվանում պարսից Շապուհ Բ. թագավորին, երբ պատմում է նրա կողմից հայոց Արշակ Բ. արքային հայկական ու պարսկական հողով փորձելու եւ բանտարկելու դեպքերը: Հր. Բարթիկյանի կարծիքով՝ հեղինակը հավանաբար նկատի ունի Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը», որի թարգմանողն է օգտագործել Բակուր անունը որպես պատվանուն³⁰: Այդ անունը կարող է ընկալվել նաեւ իբրեւ Շապուհ անվան թարգմանություն: Ըստ Մովսես Խորենացու՝ Շա-

²⁴ Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, գք. Բ., գլ. ԾԳ., 1913, էջ 182–183, աշխ.՝ 1990, էջ 118:

²⁵ Հայ մատենագրության մեջ հիշատակվող Ճենաց երկիրը Զինաստանը չէ, այն տարածված է եղել Ամուրարյա եւ ՍիրԴարյա գետերի միջեւ (տե՛ս Հ. ՍԱԼՅԱՆ, Ճեները եւ «Ճենաց աշխարհը» ըստ հայկական աղբյուրների, ՊԲՀ, 1976, թիվ 4:

²⁶ Տե՛ս ՍԵԲԵՈՍ, Պատմութիւն, գլխ. Դ., Երեւան, 2005, էջ 24 (գրք.), 25 (աշխ.):

²⁷ Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, գք. Բ., գլ. ՁԱ., 1913, էջ 221–222, աշխ.՝ 1990, էջ 144–145:

²⁸ Տե՛ս Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն, Երեւան, 1990, էջ 275, ծնթ. 191:

²⁹ Տե՛ս Գ. ՍԱՐԳՍՅԱՆ, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը եւ Մովսես Խորենացին, Երեւան, 1966, էջ 22–78. Հ. ՄԱՆԱԿՅԱՆ, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երեւան, 1934, էջ 15. «Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ., հտ. Ա., էջ 697:

³⁰ Տե՛ս ՊՐՈԿՈՊԻՈՍ ԿԵՍԱՐԱՅԻ, Պատերազմների մասին, գք. Ա., 5, «Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին», հտ. 5-րդ, Երեւան, 1967, էջ 10–11, անդ. ծնթ. 34, էջ 314:

պուհ անունը նշանակում է արքայամանուկ՝ արքայի որդի³¹, որը հավասարազոր է Բակուր անվան իմաստին՝ աստծու որդի, քանի որ աստված կոչվում էին թագավորները:

Ուշագրություն է արժանի, որ Շապուհ Բ.-ն, ինչպես նաև հայոց Արտաշես թագավորը կամ Վաղարշ Ա.-ն, մանուկ հասակում են զրկվել հորից, եւ բնական է, որ Բակուր անունը՝ աստծու որդի կամ նույնն է՝ թագավորի որդի իմաստով, նրանց՝ որպես թագավորի կամ թագաժառանգի, հատկացվեր մանկուց: Արտահայտած իմաստով Բակուր անունը հատկապես կիրառվել է մանուկ կամ երիտասարդ թագավորների պարագայում: Համենայն դեպս՝ պարթևական Բակուր Բ. թագավորի դրամները նույնպես ներկայացնում են պատանի կամ երիտասարդ արքայի, ինչպես եւ՝ դրամները Բակուր Ա.-ի՝ Որոդես Բ.-ին (Ք. ա. 57–38 թթ.) գահակից նրա նշանավոր որդու, որն ամուսնացած էր հայոց արքա Արտավազդ Բ.-ի քրոջ հետ: Ճեն-Բակուրը նույնպես երիտասարդ պիտի լիներ գահ բարձրանալիս, քանի որ նրա դեմ ապստամբել էին նրա համամայր ավագ եղբայրները՝ նշանավոր իշխաններ, որոնք ձգտում էին օգտվել թագուհի դարձած իրենց մոր դիրքից: Սեբեոսի գործի սկիզբը կազմող Անանունի հիշատակած «Արշակ Փոքր կոչվածը»³² նույնպես կարելի է դիտել Բակուր տիտղոսի իմաստային մեկնաբանություն (փոքր թագավոր = թագավորի որդի = աստծու որդի)՝ այդ բնորոշումը հատկացնելով պարթևական Հրահատ Բ. թագավորին (Ք. ա. 137/138 - մոտ 128 թթ.), որը, համաձայն Բաբելոնյան սեպագիր սալիկներից մեկի, նույնպես պատանի հասակում է թագավոր ճանաչվել³³: Հրահատ Բ.-ի դրամներն ունեն *θεοπατορος*՝ «աստվածահայր» պատվանունը³⁴, որը հուշում է, որ նրա նշա-

³¹ Տե՛ս ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, գր. Բ., գլ. Հէ., 1913, էջ, 216, աշխ.՝ 1990, էջ 141. ՀՐ. ԱՃԱՌԵԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ., էջ 144:

³² Տե՛ս ՍԵԲԵՈՍ, Պատմութիւն, գլխ. Բ. եւ Դ., էջ 18, 20 (գրբ.), 19, 21 (աշխ.):

³³ Տե՛ս Н. ДИБВОЙЗ, Политическая история Парфии, էջ 49: Հրահատ Բ.ի հայր Միհրդատ Ա.-ն (Ք. ա. 170/171–137/138 թթ.), որը հայ պատմիչների հիշատակած Արշակ Մեծն է, չորս որդիներին իր ընդարձակ երկրի տարբեր մասերում թագավորներ է կարգել (տե՛ս ՍԵԲԵՈՍ, գլխ. Գ., էջ 22, (գրբ.), 23 (աշխ.), իսկ ինքը հաստատվել Բահլում (տե՛ս ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, գր. Բ., գլ. ԿԼ., էջ, 204, աշխ.՝ 1990, էջ 132): Հավանական է, որ նա, Բահլում հաստատվելով, իրեն թագակից եւ հաջորդ է դարձրել Հրահատ Բ.-ին, եւ այս պատճառով տարբերություն ենք գտնում հայոց թագավոր Վաղարշակի վերաբերյալ հայկական տեղեկություններում. պարթևական գահակալին Վաղարշակը կամ եղբայր է անվանված, կամ որդի, բայց եթե հայր ու որդի գահակից են, Վաղարշակը մեկի որդին է, մյուսի՝ եղբայրը:

³⁴ Տե՛ս Յ. ՎՐԴ. ՏԱՇԵԱՆ, Արշակունի դրամներ, Վիեննա, 1917, էջ 34–35:

նավոր հայր Միհրդատ Ա.-ն մեծարվել է «աստված» պատվանունով, հետեւաբար՝ նրան կարող էին կոչած լինել «աստծու որդի» (=Բակուր):

Սմբատ Բագրատունին, մանուկ Արտաշեսին Պարթեւական տերություն հասցնելով, այստեղ նրան ներկայացրել է որպես հայոց թագավորի որդի՝ ազգակից պարթեւ թագավորներին³⁵, եւ լիովին հավանական է, որ Պարթեւական տերության սահմաններում մեծացած Արտաշես Վաղարշ Ա.-ն այստեղ ճանաչվել է Բակուր անունով, որը ստուգաբանորեն աստծու որդի բացատրվելով՝ պարթեւական միջավայրում մատնանշում էր թագավորի որդուն: Բակուր պատվանունը մանկուց ուղեկցել է հայոց այս թագաժառանգին, եւ տարիներ անց պարթեւական թագավոր խոսքով Ա.-ն կամ նրա դեսպանները Տրայանոս կայսեր մոտ այդ անունով են հիշել նրան: Վերելում՝ Տիգրան Սոհեմոսի մասին դիտարկումներում, տեսանք, որ Արտաշեսի Վաղարշ անունը եւ Բակուր պատվանունը կրկնվում են նրա թոռների՝ Տիգրան Սոհեմոսի որդիների դեպքում, որոնք թագավորել են Հայաստանում: Ընդ որում՝ Բակուրը թագաժառանգն էր: Սա եւս օժանդակ փաստարկ է ի նպաստ մեր այս դիտարկման:

Անդրադառնալով նաեւ Արտաշեսի մասին Մովսէս Խորենացու երկու տեղեկությունը, որոնք կարելի է հիմք են դարձել միավորելու համար այս թագավորին եւ նրա մասին տեղեկությունները Ք. ա. Ա. դարում ապրած Արտաշես Ա.-ի եւ նրա կենսագրության ու գործունեության հետ: Դրանք են պատմահոր՝ Արտաշատ քաղաքի կառուցման եւ սահմանաքարերի հաստատման մասին հաղորդումները, որոնք նա վերագրում է Ք. հ. 87–128 թթ. գահակալած Արտաշես թագավորին, այսինքն՝ մեր այս դիտարկմամբ՝ Վաղարշ Ա.-ին:

Մովսէս Խորենացին իր. գլխում հայտնում է, որ Արտաշատ քաղաքը Արտաշես թագավորը կառուցել է Մեծամորի եւ Արաքսի միախառնման տարածքում³⁶: Արաքսի նման, սակայն, Մեծամորը նույնպես փոխել է հունը: Պատմահայրը վկայում է, որ Հրազդանը (հյուսիսային ծովակից դուրս եկող մեծ գետը) խառնվել է Մեծամորի հետ³⁷, այսինքն՝ ժամանակին Մեծամորն Արաքսին միացել է ոչ թե ներկա գետաբերանում (Արմա-

³⁵ Տէս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, գր. Բ., գլ. ԼԷ.–ԼԸ., ԽԳ., 1913, էջ 161–162, 168, 1913, աշխ.՝ 1990, էջ 104–105, 107–108. Թովս Արտուր, Պատմութիւն տանն Արծրունեաց, դպր. Ա., գլ. Է., Կ. Պոլիս, 1852, էջ 55, աշխ.՝ 1978, էջ 75:

³⁶ Տէս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, գր. Բ., գլ. ԽԹ., 1913, էջ 176–177, աշխ.՝ 1990, էջ 112–115:

³⁷ Տէս անդ, գր. Բ., գլ. Զ., 1913, էջ 109, աշխ.՝ 1990, էջ 70:

վիրի մարզում), այլ ավելի արեւելք ընկած տարածքում, փաստորեն՝ մոտակայքում խորվիրապ վանքի, որը հետագայում կառուցվել է Արտաշատի գետնափոր բանտի տեղում: Քաղաքի տեղադրությունը հաստատվել է պեղումներով, որոնք բացահայտում են քարակերտ հելլենիստական քաղաքի հետքերը՝ Ք. ա. Բ. դարում կառուցված Արտաշես Ա.-ի կողմից:

Ավելի քան 250 տարի անց՝ Ք. հ. Ա.—Բ. դարերի սահմանագծում Վաղարշ Ա. Արտաշեսի կողմից Արտաշատի կառուցման մասին Մովսես Խորենացու հաղորդումը կարող է վերաբերել քաղաքի վերակառուցմանը: Պատմիչի վկայությունը հիմնված է բանավոր տեղեկության վրա: Դիմելով իր մեկենաս Սահակ Բագրատունուն՝ Մովսես Խորենացին նշում է, որ Արտաշեսի կողմից Արտաշատի կառուցումը Սահակ իշխանին հայտնի է գողթան երգերից, որոնցում պատմվել է Արտաշեսի եւ ալանների խնամության մասին, նրա որդիների նախանձը միմյանց հանդեպ, թշնամությունն Արգամի տան հետ: Վերջիններս Հայաստանում հաստատված մարերի սերունդներն էին, որոնք ապրում էին Մասիսի ստորոտում, եւ բնական է, որ Գողթնում են պահպանվել Արտաշեսին վերաբերող այս դեպքերի հիշողությունները: Քաղաքի մասին պատմիչը գրեթե ոչինչ չի հավելել: Ընդ որում՝ թեպետ նրա համակրանքն Արտաշեսի հանդեպ է, վերջինիս նախորդ եւ հակառակորդ Երվանդի (Տրդատ Ա.) կառուցումների մասին նա մանրամասն եւ գովեստով նկարագրություններ է բերում՝ ըստ իր գրավոր աղբյուրի: Արտաշատի կառուցման վերաբերյալ նա միայն նշում է, որ Արաքս գետի բերած փայտն են օգտագործել, հիշատակում է մեհյանի կառուցումը, Բագարանից կուռքերի փոխադրումը եւ ոչինչ չի հաղորդում այն շքեղ քաղաքի մասին, որը գովաբանում են հունահռոմեական աղբյուրները՝ Արտաշես Ա.-ի կառուցած Արտաշատը համեմատելով Կարթագենի հետ: Պատմիչը հիմնվել է միայն Սաթենիկին կնության վերցրած Արտաշեսի կողմից Արտաշատը կառուցելու մասին բանավոր տեղեկության վրա, որը չի կարող վերաբերել Արտաշես Ա.-ի կողմից քաղաքի կառուցմանը, որովհետեւ քարակերտ, գեղեցիկ կառույցներով զարդարված քաղաքը, բանավոր ավանդության կանոններով, ավելի չափազանցված պիտի ներկայացվեր, իսկ պատմիչը քարի փոխարեն փայտ է հիշում, միայն մեհյանի կառուցում, Արտեմիսի (=Անահիտի) եւ Ապոլոնի (=Վահագնի) կուռքերի փոխադրում: Արտաշատի մեհյանի եւ կուռքերի տեղը քաղաքում ու դեպի քաղաք տանող ճանապարհի վրա պատմահայրը կարող էր իմանալ նաեւ Ագաթանգե-

ղոսի միջոցով: Մեծամորի եւ Արաքսի միախառնման հատվածում Արտաշատի դիրքը նա նույնպես կարող էր իմանալ անկախ իր բանավոր աղբյուրից: Այս տեսանկյունից նայելով՝ բանավոր սուղ ավանդույթունը, որից օգտվել է Մովսես Խորենացին, պետք է վերագրել Արտաշատ քաղաքի ոչ թե հաստատմանը, այլ վերակառուցմանը, ինչը, բնականաբար, չի ճշտվել բանավոր ավանդույթյամբ, իսկ Մովսես Խորենացին Արտաշես Ա. թագավորի մասին չգիտի, որպեսզի ուղղի բանավոր տեղեկությունը: Վաղարշ Ա. Արտաշեսը, այսպիսով, ավարտին է հասցրել Արտաշատի վերակառուցումը: Նրա նախորդ Երվանդը, որ Տրդատ Ա.-ն է, Ներոն կայսրից ստացած գումարը տրամադրել է ոչ միայն հիմնովին կործանված Արտաշատի վերականգնմանը, որը երկարատեւ աշխատանք էր պահանջում, այլեւ իր անվամբ ավելի փոքր արքայանիստ նոր քաղաքի՝ Երվանդաշատի, Երվանդակերտ ավանի եւ նոր մեհենական կենտրոնի՝ Բագարանի կառուցմանը: Երվանդ Տրդատ Ա.-ից հետո ավարտելով Արտաշատի վերակառուցումը եւ այնտեղ մեհյան կառուցելով ու կուռքերը Բագարանից փոխադրելով՝ Արտաշեսը մայրաքաղաքը վերադարձրել է Արտաշատ: Այստեղ գահակալել են նրա Տիրան եւ Տիգրան Սոհեմոս որդիները, վերջինիս Բակուր որդին՝ մինչեւ 164 թ., երբ քաղաքը կրկին վնասվել է հռոմեական հարձակումից, եւ հռոմեացիները Վարդգեսավան-Նոր քաղաքն են դարձրել մայրաքաղաք:

Սահմանաքարերից ամենաընդարձակը Իշխանասարի ստորոտին գտնված քարն է, որի վրա արձանագրված են այն հաստատող Արտաշես արքայի, նրա հոր, նաեւ թագակապ իշխանի եւ վերջինիս հոր անունները: Թագավորի մասին արձանագրված է. «Արտաշես թագավոր, Երվանդ, Բարի, որդի Զարեհի»³⁸: Բոլոր ընթեռնելի սահմանաքարերի վրա արամերեն RWND, RWNDKN գրությունը, որը հիմնականում կարդում են «Երվանդ», «Երվանդական»³⁹, միակ ծանրակշիռ կովանը կարող էր լինել, որի հիման վրա արդարացված լիներ մեր գիտարկած Արտաշեսին Քրիստոսից առաջ ապրած Արտաշես Ա.-ի հետ նույնացնելը: Բայց քանի որ առկա է հայոց եւ օտար աղբյուրների համադրելիությունը Արտաշեսի՝

³⁸ Տէս Ա. ПЕРИХАНИЯН, Арамейская надпись из Зангезура, ՊԲՀ, 1965, թիվ 4, էջ 107–126:

³⁹ Տէս Ա. БОРИСОВ, Надписи Артаксия (Артагеша), царя Армении, ВДИ, 1946, թիվ 2, էջ 97–103. И. Дьяконов, К. СТАРКОВА, Надписи Артаксия, царя Армении, ВДИ, 1955, թիվ 2, էջ 88–91. Գ. ՏԻՐԱՅՅԱՆ, Արտաշես I-ի եւս մեկ նորագյուտ արամերեն արձանագրություն, ՊԲՀ, 1977, թիվ 4, էջ 254–259:

նույն ինքը՝ Վաղարշ Ա.-ի եւ նրա որդիների վերաբերյալ, որոնք կապված են Ք. հ. Ա.—Բ. դարերի դեպքերի եւ անձանց հետ, այդ բառի առկայությունը պետք է բացատրություն ունենա: Եւ այն շատ մոտ ու հասանելի է, եթե նկատի ունենանք, որ անունները կիրառվել են եւ իբրեւ հատուկ անուն, եւ իրենց արտահայտած իմաստով՝ որպես պատվանուն: «Երվանդ» բառը (պահլավերեն եւ պարսկերեն՝ arvand, զենդի լեզվում եւ սանսկրիտով՝ aurva, aurvant) նշանակում է արագընթաց, քաջ, քաջընթաց: Այս իմաստով Arwand կոչվել է նաեւ Տիգրիս գետը⁴⁰: Հունահռոմեական աղբյուրները Երվանդ անունը նշում են Օրոնտես ձեւով: Օրոնտես է կոչվում Սիրիայի արագընթաց մեծ գետը, որը հարավի հարթությունից զարմանալիորեն բարձրանալով դեպի բլուրները՝ Անտիոքի մոտ թափվում է Միջերկրական ծովը: Սահմանաքարի վրա նույնպես «Երվանդ», «Երվանդական» բառերը բնորոշումներ են՝ արագընթաց, քաջ իմաստով, որոնք տվյալ դեպքում կիրառվել են որպես թագավորի պատվանուն: Ըստ այդմ՝ հիշյալ քարի վրա գրված է. «Արտաշես, թագավոր Քաջընթաց, Բարի, որդի Զարեհի»: Նույն քաջընթաց իմաստով Երվանդ է կոչվել Հայաստանը նվաճած Տրդատ Ա.-ն, եւ նրան հաղթած Արտաշես Վաղարշը Ա.-ն վերցրել է այդ պատվանունը:

Ուշագրավ է Բարի պատվանունը, որը պետք է հասկանալ ոչ թե Բարեպաշտ, այլ Բարեհամբավ: Բյուզանդական պատմիչ Հովհաննես Մալալան (Զ. դ.) Տրայանոսի օրոք իշխած հայոց թագավորին (այսինքն՝ Արտաշես Վաղարշ Ա.-ին) խոսքով է կոչում եւ Սանատրուկի որդի⁴¹: Խոսքով անվան նշանակությունը բարեհամբավն⁴² է, որը եւ արձանագրված է սահմանաքարի վրա: Մալալան որպես աղբյուր օգտագործել է Արրիանոսի՝ մեզ չհասած «Պարթևականք» գործը: Երիտասարդ տարիքում Արրիանոսը եղել է հռոմեական գործող բանակում Տրայանոսի արեւելյան արշավանքի ժամանակ եւ ծառայել հռոմեացիներից ժամանակավորա-

⁴⁰ Տե՛ս Հ.Ր. ԱՃԱՌԵԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ., Երեւան, 1944, էջ 145: Հնդեւրոպական լեզուներում մնացած «երվանդ» բառի այս իմաստը հուշում է, որ այն, հնարավոր է, ծնունդ է առել հայերեն «արագ» եւ «վարգ» բառերի միացումից, սղումից եւ հնչյունափոխությունից՝ «արագվարգ», «արվարգ», «երվանդ»: Ընդհանրությունը գուցե նախալեզվի շերտից է, համեմայն դեպս, հայոց պատմությունը Երվանդ անունը հիշատակում է Ք. ա. Ձ. դարից (Երվանդ Սակավակյաց թագավոր):

⁴¹ Տե՛ս ИОАНН МАЛАЛА, Хронография, книга XI (տե՛ս «Классическая и византийская традиция» (материалы VIII междунар. научн. конф.), Белгород, 2014, էջ 340—343):

⁴² Տե՛ս Հ.Ր. ԱՃԱՌԵԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ., էջ 529—530:

պես բռնագրավված Հայաստանում⁴³, որով նրա տեղեկությունը հայոց խոսքով թագավորի մասին ականատեսի վկայության արժեք ունի: Խոսքով անունը կիրառվել է նաեւ թագավոր իմաստով⁴⁴, բայց սահմանափակ արամեերեն արձանագրության մեջ «թագավոր» բառն առկա է MLK՝ «մալիք» («մալքա») ձևով: Մալալան, ուրեմն, ըստ ժամանակակից Արրիանոսի, հիշատակել է Արտաշես Վաղարշ Ա.-ի Բարեհամբավ պատվանունը: Այս տիտղոսի հունարեն համարժեքը (Επιφανους)՝ «Նշանավոր», գրեթե միշտ հանդիպում է պարթևական Արշակունի թագավորների դրամների վրա⁴⁵, նաեւ՝ Արտաշես Վաղարշ Ա.-ին ժամանակով մոտ գահակալածների, եւ հայ Արշակունի թագավորի կողմից այդ տիտղոսի օգտագործումը բնական է: Խոսքով անվան բարեհամբավ կամ նշանավոր իմաստի կիրառության ցայտուն օրինակը դրսևորված է նաեւ Նախշի-Ռուստեմի արձանագրության մեջ, որտեղ Արտաշես Վաղարշ Ա.-ի օրերից մեկուկես դար անց Սասանյան Շապուհ Ա.-ն ինչպես ինքն իրեն, այնպես եւ իրանի տարբեր մասերում թագավորող իր որդիներին սեփական անունից, թագավոր լինելու պարագան նշելուց բացի, կոչել է նաեւ խոսքով՝ Բարեհամբավ⁴⁶:

Կարող ենք նկատի ունենալ նաեւ, որ Մովսես Խորենացին թագադիր ասպետի պաշտոնը հաստատված է ավանդում Հայաստանում գահակալած առաջին Արշակունու՝ Վաղարշակի կողմից, որն իշխանության է եկել Ք. ա. Բ. դարի վերջում՝ Սելեւկյան թագավոր Անտիոքոս է. Սիրացու սպանությունից հետո (Ք. ա. 134 կամ 129 թթ.), այսինքն՝ Արտաշես Ա.-ի մահվան ընդունված թվականից 30-ամյակ անց, ուրեմն՝ սահմանափակի վրա նշված թագադիր իշխանը չի կարող լինել Արտաշես Ա.-ի ժամանակակիցը:

⁴³ S^{én} APPIAN, *Тактическое искусство*, СПб, 2010, *Թարգմանիչ Ա. Նեֆյոդկինի* «Жизнь и творчество» ներածականը, էջ 9:

⁴⁴ S^{én} Հ.Ր. ԱՃԱՌԵԱՆ, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Ա., Երևան, 1942, էջ 320՝ «Արքա» անձնանունը, հտ. Բ., 1944, էջ 530՝ «Խոսքով» անձնանունը: «Խոսքով» բառը թագավոր, գլխավոր, մեծ իմաստներով կիրառություն է ունեցել ոչ միայն մարդկանց վերաբերմամբ: Ղ. Ալիշանն այն կիրառված է նշում Հայոց թվականի վերաբերյալ, որը կոչվել է նաեւ Մեծ թվական կամ Խոսքովային թվական (տե՛ս Ղ. ՎՐԳ. ԱԼԻՇԱՆ, *Յուշիք հայրենեաց Հայոց*, Գ., «Հայկալ շրջան, տօմար եւ թուական հին հայոց», Վենետիկ, 1869, էջ 78):

⁴⁵ Դրամների նկարագրությունը տե՛ս Յ. ՎՐԳ. ՏԱՇԵԱՆ, *Արշակունի դրամներ*, Վիեննա, 1917, էջ 50–140:

⁴⁶ S^{én} A. MARICQ, *Classica et Orientalia*, «Syria», 1958, v. 35, էջ 316–317 (https://www.persee.fr/doc/syria_0039-7946_1958_num_35_3_5332), նաեւ՝ «Картиис цховреба», էջ 37–38:

Սահմանաքարին արձանագրված Քաջընթաց (Քաջ), Բարեհամբավ պատվանուններն իրենց արտահայտած իմաստով շատ բնորոշ են Մովսես Խորենացու ներկայացրած Արտաշես արքային, որը Սանատրուկի որդին էր՝ ժամանակակիցը Դոմետիանոս, Տրայանոս, Ադրիանոս կայսրերի եւ բուն անունով՝ Վաղարշ, ինչպես Սանատրուկի որդին հիշված է Դիոն Կասսիոսի կողմից: Ուշադրության առնենք նաեւ, որ Սանատրուկի անունը Զարեհ է, ինչպես Արտաշեսի հոր անունը գրանցված է սահմանաքարին: Սանատրուկ նա կոչվել է դայակի կողմից ձնահյուսից փրկվելու պատճառով⁴⁷: Տեսանք, որ պապի Զարեհ անունն է կրել Արտաշես Վաղարշ Ա.-ի որդիներից մեկը:

Սահմանաքարերը, ինչպես եւ Արտաշատի կառուցման մասին Մովսես Խորենացու հաղորդումը, այսպիսով, նույնպես առիթ չեն տալիս Արտաշեսին կամ Վաղարշ Ա.-ին ժամանակի մեջ հետ տանելու եւ միավորելու Արտաշես Ա.-ի հետ: Ընդհակառակը՝ Գառնիում գտնված սահմանաքարին արձանագրված է. «Մեծ Հայքի թագավոր, Վաղարշի որդի»⁴⁸: Այն կարելի է վերագրել ինչպես Արտաշես Վաղարշ Ա.-ի գահակալած որդիներից մեկին (Տիրան, Տիգրան Սոհեմոս), այնպես եւ նրա համանուն թոռ Վաղարշ Բ.-ի որդուն (Խոսրով Մեծին), ինչը ցույց է տալիս հողաբաժան քարերի նպատակային կիրառության շարունակումը Արտաշես Վաղարշ Ա.-ի անմիջական հետնորդների կողմից:

* * *

Փորձեցինք ներկայացնել, որ հայկական աղբյուրներին հայտնի, Ք. հ. Ա.—Բ. դդ. սահմանագծում իշխած Արտաշես թագավորը, որը հիշված է

⁴⁷ Տե՛ս ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, գր. Բ., գլ. ԼԶ., էջ 160—161, աշխ.՝ 1990, էջ 103: Դայակի անունը Սանոտ է եղել, նա Բյուրատ Բագրատունու քույրը եւ Խոսրեն Արծրունու կինն էր: Նրա անունով է պատմիչը բացատրում Սանատրուկ անունը (Սանոտի տված), քանի որ դայակը փրկել էր մանկանը ձնաբքից: Սանատրուկ անունը, սակայն, հիշված է ավելի վաղ ժամանակում, նաեւ Մակաբայեցիների Գ. գրքի (Զ. 4) հայերեն բնագրում՝ իբրեւ համարժեքը Սենեքերիմ անվան, ինչպես առկա է հունարենում: Երկու անունն էլ կապվում են Սան կամ Սին աստվածության հետ, որը Լուսինն է: Սանատրուկ նշանակում է Սանի (Սինի)՝ Լուսնի տված, պարզեւ (տե՛ս Հ. Բ. ԱՃԱՌԵԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ., էջ 392, 478—479): Սանոտ անվան հիմքը նույնպես Սան, Սին, Լուսինն է, եւ Մովսես Խորենացու բացատրությունն այդքան էլ հեռու չէ իրականությունից, եւ հետո՝ այն ժամանակներում շատ լավ իմանալով Սանատրուկ ու Սանոտ անունների իմաստը՝ դայակի փրկած մանկանը տվել են այն արական անունը, որն իմաստային համարժեքն է դայակի իգական անվան: Արդի հայկական իրականության մեջ Սանոտ անվան իմաստային համարժեքը Լուսիկ կամ Լուսինե անունն է:

⁴⁸ Տե՛ս А. ПЕРИХАНЫЯ, Арамейская надпись из Гарни, ՊԲՀ, 1964, թիվ 3, էջ 123—138:

նաեւ Սուրբ Ոսկյանց եւ Սուրբ Սուքիասյանց վկայաբանություններում, Վաղարշ Ա. թագավորն է: Նա կրել է Քաջընթաց (Արագընթաց=Երվանդ) եւ Բարի կամ Բարեհամբավ (Նշանավոր=Խոսարով) պատվանունները, իսկ պարթեւական աշխարհում, որտեղ ապրել է մանկուց՝ 21 տարի, հասակ առել ու կայացել որպես քաջ ռազմիկ եւ ապագա թագավոր, ծանոթ է եղել նաեւ Բակուր անունով, որով բնորոշում էին թագաժառանգին, իսկ գահակալությունից հետո այդ անունը կիրառվել է որպես տիտղոս:

Վաղարշ Ա.-ին պետք է վերագրվեն մեզ հետաքրքրող Արտաշես թագավորի մասին Մովսես Խորենացու եւ հայ մատենագրության հաղորդածը՝ Սաթենիկ տիկնոջով, որդիներով եւ գործերով՝ նրա գահակալությունը ճանաչելով Տրդատ Ա. Երվանդի իշխանությունից հետո՝ 87–128 թթ.: Նրան հաջորդել են երեք որդիները, նախ ավագը՝ Արտավազդը, որ գահին է եղել կարճատեւ՝ 128–130 թթ., բայց մինչ այդ գահակից լինելով հորը՝ եղել է երկրի փաստացի կառավարողը (–114 թթ.): Հաջորդել են Տիրանը (130–150 թթ., իշխելով 20 տարի) եւ Տիգրանը՝ վերակոչված Սոհեմոս (42 տարի՝ 150–191 թթ., ընդմիջումով 161–164 թթ., երբ իշխել է նրա որդի Բակուրը): Այս գահատարիները կարող են ինչ-ինչ նկատառումով որոշ տարբերությամբ հաշվարկվել (հատկապես՝ Տիգրանին հաջորդած նրա միջնեկ որդու՝ Վաղարշ Բ.-ի գահատարիները՝ կապված հետագա տեղեկությունների հետ). էականն այն է, որ Ք. հ. Ա. դարավերջից Բ. դար ժամանակահատվածում վերականգնվի հայկական աղբյուրներով ավանդված Արտաշես թագավորի եւ նրա որդիների իշխանությունը, որոնց մասին, ինչպես եւ ժամանակի իրադարձությունների մասին հայկական եւ օտար աղբյուրների տեղեկությունները համադրելի են: Այդ ժամանակահատվածը դատարկ չէ, որպեսզի ենթադրաբար վերականգնվի, եւ հայկական աղբյուրներին հայտնի՝ մեր դիտարկած Արտաշեսը (ըստ հայոց՝ Արտաշես Բ.-ն) չի նույնանում օտար աղբյուրներից ծանոթ Արտաշես Ա.-ի հետ, այլ, ինչպես փորձեցինք ներկայացնել, Վաղարշ Ա.-ն է:

РЕЗЮМЕ

Совокупность агиографических данных, сообщений армянских историков и греко-римских источников свидетельствует о том, что известного в армянской исторической литературе и агиологии царя Арташеса (Арташеса II, со-

гласно армянским историкам) не следует отождествлять с царем Арташесом I, правившим в Армении в II в. до н.э., как признает историография, но с Вагаршем I, правившим в I—II вв.

Свидетельства о св. Воскянк и св. Сукиасянк ценились как самостоятельный источник, написанный до V века, т. е. появления армянского алфавита. Новая интерпретация сведений показывает, что данные армянской литературы о царе Арташесе и его сыновьях не противоречат сообщениям зарубежных источников: они сопоставимы, и нет необходимости использовать армянские сведения с гипотетическим переосмыслением, перемещая исторические фигуры и события во времени.

SUMMARY

A combination of hagiographic data, reports of Armenian historians and Greco-Roman sources suggests that King Artashes (Artashes II, according to Armenian historians), known in Armenian historical literature and hagiology, should not be identified with King Artashes I that ruled in Armenia in the 2nd century BC, as acknowledged by historiography, but with Vagharsh I, who ruled in the 1st—2nd centuries AD.

The martyrologies of Sts. Voskyank and St. Sukiasyank were valued as an independent source, written before the 5th century, i.e. the emergence of the Armenian alphabet. The new interpretation of the information shows that the data of the Armenian literature about King Artashes and his sons does not contradict the reports of foreign sources: they are comparable, and there is no need to use the Armenian information with a hypothetical reinterpretation, moving historical figures and events in time.

